տէր աստուած յաջողութիւն պարգևեսցէ[1]։ (Հ. Պետրոս վ. առ Մխիթար, յամին 1744 փետր. 3 [տեղի?])։

ղգ.

Երանելի տէր Կոմիտասին պատմութիւնն զոր գրեալ է տէր անդօնն մուրատչայեան, տուեալ է ի ձեռս սպասաւորի մասէլի թարգմանին, զի կամ ընդ փոստի, կամ ընդ նաւու ուղարկիցէ այդր, թերևս մինչև ցարդ հասեալ իցէ այդր, և թէ ոչ՝ վերստին կարէ օրինակել և ուղարկել[2]։ (Հ. Միքայէլ վ. առ Մխիթար, յամին 1744 փետր. 5. [Կ. Պոլիս])։

ղդ.

Զներքոյ գրեցեալն փորել տուի ի վերայ գերեզմանի իւրում [այսինքն տիրացու Կարապետի].

Այս է տապան դիր հանգստի. մաքրակենցաղ սրբասիրի
ուշիմագոյն խոհեմ դպրի բարեհամբաւ կարապետի
կոչեցելոյ դախտաճողլի. ի քաղաքէ դրապլըզօնցի.
եկեալ ի Հռոմ յիմաստ վարժի ջանիւ մեծաւ ի նոյն ծաղկի
բայց ոչ տևեալ տհաս կտրի. փոխեալ ամօք տասն և ութնի
հաւատարիմ գտեալ լինի պատկերահան յովաննիսի
որ ետ դնել զարձան քարի ի վերայ իւրոյ բարեկամի
թվին և այլն.

(Յովհաննէս պատկերահան առ Մխիթար, յամին 1744 մարտի 14. [Հռոմ])։

ղե.

Ով Վերապատուելի Հ. Մատթէոս ուսուցիչ իմ ծանիր, զի գտի ես զօրինակ մի վարուց տէր Կոմիտաս մարտիրոսին, յորում լիապէս մի ըստ միոջէ պատմէ զամենայն, ուստի եթէ կամիս ծանոթ թղթով. և ես օրինակեցից և յղեցից։ (Պետրոս? առ Մխիթար, յամի 1745 ի ապրիլի 20. [տեղի?])։

ղզ.

Այսօր գափիտան փաշան բարակ արմատայով, այսինքն չէքտիւրիներով, ֆրխաթներով ղանճապաշներով ելաւ գնաց, ասեն գնալ ի սեաւ ծով, ի ղռիմ, առ ի չինել զօղու քաղաքն։ (Հ. Միքայէլ առ Մխիթար, յամին 1744 մայիսի 9. ի Կ. Պոլիս)։

ղէ.

Զնոր լուր ինչ ոչ լուայ աստէն, եթէ ոչ միայն զայս, թէ կամեցեալք են ոմանք թունաւորել զԹագուհին[3], որք և եղեալք են այլակերպեցեալք ի զգեստս մաճարականս, որպէս զի մի լինիցի կասկած զնոցանէ։ (Հ. Թեոդորոս Մէոիաչցի առ Մխիթար, յամին 1744 մայիսի 14. ի Թրիեստ)։

---

1. Կղզեկիս մասին կը խօսի։

2. Ս. Ղազարու Հեռագրաց մէջ չունինք Անտոն Մուրատչայեանի գրած Եր. Կոմիտասի պատմութիւնը. չի կայ նաև այլուր ոևէ յիշատակութիւն մը, թէ իրօք Ուխտս ստացած է զայն թէ ոչ։

3. Մարիամ Թերեզա Աւստրիոյ։